ՄԱՀԱԽՈՍԱԿԱՆՆԵՐ
OBITUARIES
НЕКРОЛОГИ

ԳԵՎՈՐԳ ՏԵՐ-ՎԱՐԴԱՆՅԱՆ
(1951-2023)

2023 թ. մարտի 29-ին կյանքից հեռացավ Մաշտոցյան Մատենադարանի գլխավոր ավանդապահ, Ձեռագրագիտության բաժնի վարիչ, պատմական գիտությունների դոկտոր, Գևորգյան հոգևոր ճեմարանի և Երևանի պետական համալսարանի երկարամյա դասախոս Գևորգ Տեր-Վարդանյանը:

Գևորգ Տեր-Վարդանյանը ծնվել է 1951 թ. հունվարի 9-ին Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Ներքին Կարմիրաղբյուր գյուղում, 1968 թ. ավարտել է նույն գյուղի միջնակարգ դպրոցը: 1968-1973 թթ. սովորել է Երևանի պետական համալսարանի Պատմության ֆակուլտետի Հնագիտության, աղբյուրագիտության և ազգագրության բաժնում, որն ավարտել է աղբյուրագետ-պատմաբանի մասնագիտացմամբ:

1974 թ. սկզբից աշխատել է Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանում որպես լաբորանտ, 1975 թվականից՝ կրտսեր գիտաշխատող, իսկ 1978-ից՝ ավագ գիտաշխատող: 1977 թ. նա ստանձնել է Մատենադարանի գլխավոր ավանդապահի պարտականությունները: 1992 թ. նշանակվել է նաև Ձեռագրագիտական հետազոտությունների խմբի ղեկավար: 1995-1998 թթ. զբաղեցրել է Հայաստանի Ազգային գրադարանի տնօրենի պաշտոնը: 2001 թ. Գևորգ Տեր-Վարդանյանը կրկին ստանձնել է Մատենադարանի գլխավոր ավանդապահի

պաշտոնը՝ զուգահեռ ղեկավարելով Ձեռագրագիտության խումբը: 2008 թ. Գևորգ Տեր-Վարդանյանը հանձն է առել «Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց» ծրագրի մի խմբի ղեկավարումը, իսկ 2011 թ. դարձել այս ծրագրի հիման վրա ձևավորված «Հայերեն ձեռագրերի Մայր ցուցակ» բաժնի (հետագայում՝ «Ձեռագրագիտության») ղեկավարը: 1991-2003 թթ. եղել է Երևանի քաղաքապետարանի Անվանակոչության հանձնաժողովի նախագահ: 1984 թ. ստացել է պատմական գիտությունների թեկնածուի աստիճան՝ պաշտպանելով «Ներսես Պալիանենցի պատմագրական ժառանգությունը (ԺԴ. դ.)» ատենախոսությունը, իսկ 2016 թ.՝ պատմական գիտությունների դոկտորի աստիճան՝ պաշտպանելով «Հայոց պատմագրքերի գիտական բնագրերի կազմության խնդիրներ և ձեռագրական ավանդույթներ» ատենախոսությունը:

Գևորգ Տեր-Վարդանյանը 1996-2022 թթ. դասախոսել է Երևանի պետական համալսարանի Պատմության ֆակուլտետում, զուգահեռաբար 2005-2022 թթ.՝ Գևորգյան ճեմարանում՝ կարդալով մի շարք դասընթացներ՝ Հնագրություն, Ձեռագրագիտություն, Հնագրություն և ձեռագրագիտություն, Բնագրագիտություն, Պատմագրական և Աստուածաշնչական բնագրագիտություն, Հայերեն տպագիր գրքի պատմություն, Գիրը և գիրքը հայ մշակույթում:

Նա ղեկավարել է Մատենադարանի, համալսարանի և ճեմարանի մի շարք մագիստրոսների և ասպիրանտների գիտական աշխատանքները: Իսկ Մաշտոցի անվան Մատենադարանում երկար տարիներ եղել է մի քանի տասնյակ երիտասարդ աշխատակիցների ոչ միայն բաժնի վարիչը, այլ նաև գիտական ղեկավարն ու ուսուցիչը՝ փոխանցելով նրանց իր մեծ փորձն ու գիտելիքների պաշարը, հայ ձեռագիր մատյանների նկատմամբ սերը, պատրաստելով հայ ձեռագրագետների մի ամբողջ սերունդ:

Գևորգ Տեր-Վարդանյանը նշանակալի ավանդ է ունեցել հայերեն ձեռագրերի պահպանման և գիտական ուսումնասիրության գործում և պատահական չէ, որ երկար տարիներ վարել է Մատենադարանի գլխավոր ավանդապահի պաշտոնը, ղեկավարել հայերեն ձեռագրերի գիտական նկարագրության և ուսումնասիրության բաժինը: Նա հայ ձեռագրագիտության ասպարեզում ժամանակակից ամենահեղինակավոր մասնագետներից էր ինչպես Հայաստանում, այնպես էլ արտերկրում. նա լավագույնս տիրապետում էր հայկական ձեռագրական մշակույթի նրբություններին:

Գևորգ Տեր-Վարդանյանը զբաղվել է հիմնականում միջնադարյան պատմական, ծիսական, դավանաբանական և այլ կարգի աղբյուրների բանասիրական և բնագրագիտական քննությամբ, բնագրերի գիտական հրատարակություններ կազմելու, ձեռագրերի նկարագրության և նմանաբնույթ այլ աշխատանքներով, որոնք էլ ներկայացված են նրա հայերեն և այլալեզու երկու հարյուրից ավելի

ուսումնասիրություններում և հոդվածներում։ Նա է եղել 1974-1994 թթ. Մատենադարան մուտք գործած ձեռագրական ամբողջ նոր նյութի (1475 ձեռագրական միավոր) առաջին նկարագրողը։

Հմուտ ձեռագրագետի աշխատությունների մեջ առանձնահատուկ տեղ են գրավում ձեռագրացուցակների կազմումը, մասնավորապես նրա ղեկավարությամբ և խմբագրությամբ են հրատարակվել Մատենադարանի ձեռագրական հավաքածուն ներկայացնող «Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի» մեծարժեք բազմահատորյակի վերջին յոթ Զ-Ժ., հատորները, և առաջիկայում կհրատարակվեն ԺԱ-ԺԲ. հատորները։

Բացի Մաշտոցյան Մատենադարանի ձեռագիր մատյանների գիտական նկարագրության, ձեռագրացուցակներ կազմելու, խմբագրելու և հրատարակելու աշխատանքներից, նա հետաքրքրված էր նաև անտիպ ձեռագրացուցակների հրատարակման աշխատանքներով, ինչպես նաև այլ ձեռագրական կենտրոնների, մասնավոր հավաքածուների ձեռագրերը գիտական հանրությանը հայտնի դարձնելով։ Դրանցից են Մեսրոպ Մագիստրոս Տեր-Մովսիսյանի «Յուցակ հայերէն ձեռագրաց Մկրտիչ Սանասարեանի», Տրդատ եպիսկոպոս Պալյանի «Յուցակ հայերէն ձեռագրաց ի Կեսարիայ, Զմիւռնիայ եւ ի շրջակայս նոցին» ձեռագրացուցակները։ Այս շարքը պիտի համալրեին նաև դեռևս անտիպ հետևյալ ցուցակները՝ Վենետիկի Մխիթարյան միաբանության Հարություն Քյուրտյանի հավաքածուի, Մեսրոպ վարդապետ Մաքսուդյանի կատարած ձեռագրերի նկարագրությունների, Երվանդ Լալայանի կազմած Վասպուրականի ցուցակի շարունակությունը, Վրաստանի ձեռագրերի Ազգային կենտրոնի հայերեն ձեռագրերի նկարագրությունների ցուցակը, Ատրպատականի ձեռագրերի նկարագրությունների ցուցակը և այլն։

Գևորգ Տեր-Վարդանյանը կապող օղակ էր Երևանի Մատենադարանի և աշխարհի տարբեր ծայրերում գտնվող ձեռագրական կենտրոնների միջև։ Նրան մեծապես մտահոգում էր աշխարհի տարբեր կետերում գտնվող հայկական ձեռագրական կենտրոնների, հաստատությունների ու անհատներին պատկանող, չնկարագրված ձեռագրերի ճակատագիրը, և առաջին իսկ հնարավորության դեպքում ձեռնամուխ էր լինում դրանց նկարագրությանը։ Վերջին տարիների նման մեծ ու կարևոր աշխատանքներից է Լիբանանի Կաթողիկե հայոց Զմմառի պատրիարքական վանքի հետ ձեռք բերած պայմանավորվածությամբ Մատենադարանի իր բաժնի մի խումբ աշխատակիցների հետ հազարից ավելի հայերեն չնկարագրված ձեռագրերի նկարագրությունն ու ցուցակի պատրաստումը, որը դեռևս ընթացքի մեջ է։ Իսկ այն բոլոր դեպքերում, երբ աշխատանքային ծանրաբեռնվածության ու ժամանակի սղության պատճառով հնարավոր չէր լինում անձամբ կատարելու այս կամ այն կենտրոնում կամ Սփյուռքի հայ հա-

մայնքներում գտնվող ձեռագրերի ցուցակագրման գործը, նա պատրաստակամորեն օգնում և աջակցում էր մյուս ուսումնասիրողներին՝ իրականացնելու նման կարևոր առաքելությունը: Բացի այս աշխատանքներից՝ նա խմբագրել է նաև հայերեն և այլալեզու մի շարք արժեքավոր ձեռագրացուցակներ, ինչպես՝ Ռայմոն Գևորգյանի և Արմեն Տեր-Ստեփանյանի կազմած՝ Ֆրանսիայի Ազգային գրադարանի հայերեն ձեռագրերի ցուցակը (համախմբագիր՝ Բ. Ուտիե), Ռուզան Պողոսյանի կազմած՝ Մատենադարանի եբրայերեն ձեռագրերի հայերենանգլերեն ցուցակը (համախմբագիր՝ Գ. Մուրադյան), Օլգա Վարդազարյանի կազմած՝ Մատենադարանի եկեղեցասլավոներեն և ռուսերեն ձեռագրերի ցուցակը (համախմբագիր՝ Գ. Մուրադյան):

Ձեռագրերի գիտական ուսումնասիրությունից, գիտական հանրությանը ներկայացնելուց բացի, նրան հետաքրքրում էին նաև մեր հոգևոր գրական հարստության ոդիսականը, ներկայիս հանգրվանը և կորուստները: Ձեռագրական կորուստների մասին Սուրեն Գոլանճյանի, Հովհաննես վ. Հյուսյանի, Բաբկեն աթոռակից կաթողիկոս Կյուլեսերյանի հրատարակած հոդվածները Գևորգ Տեր-Վարդանյանը ամփոփել է «Եղեռնը և մեր ձեռագրերի կորուստներն ու փրկութիւնները» գրքում՝ ավելացնելով այս թեմայով իր ուսումնասիրությունները, որոնցում ներկայացված է թուրքական բարբարոսությունների հետևանքով հայկական կոտորածների ժամանակ մեր ձեռագիր-գրքային մշակույթի կորուստների ընդհանուր պատկերը:

Գևորգ Տեր-Վարդանյանի գիտական գործունեության հաջորդ կարևոր ասպարեզը պատմագրական, վարքագրական և մատենագրական բնագրերի կազմումը և հրատարակումն է: «Մատենագիրք հայոց» մատենաշարում հրատարակվել են Անանիա Շիրակացու (Դ. հտ.), Ղևոնդ վարդապետի, Արտավազդ վանահայր Երաշխավորի, Համազասպ եւ Սահակ Արծրունիների վկայաբանության (Զ. հտ.), Թովմա Արծրունու եւ Անանունի, Հովհաննես Դրասխանակերտցու, Մեսրոպ Վայոցձորեցու (ԺԱ. հտ.), Արիստակես Լաստիվերցու (ԺԶ. հտ.) գործերի՝ նրա կազմած բնագրերն ու բնագրագիտության համար խիստ արժեքավոր նախաբան-քննությունները՝ հիմք ձեռագրերի, նախկին հրատարակությունների համեմատություն-վերլուծությամբ ու դիտողություններով:

Սրանց կողքին են նաև դեռևս անտիպ Հովհաննես Սարկավագի և Վանական վարդապետի աշխատությունների բնագրերն ու դրանց վերաբերյալ ուսումնասիրությունները:

Գևորգ Տեր-Վարդանյանի աշխատասիրությամբ են հրատարակվել հետևյալ գրքերը՝ Ե. Օտյան, «Մեր երեսփոխանները, մեր ազգային ժողովը», «Մայր Մաշտոց (հտ. Ա., գիրք Ա.)», Վահան ծ. վրդ. Բաստամեանց, «Տարեգրութիւն, Ս. Էջմիածին (1872-1880 թթ.)»:

Համահեղինակությամբ հրատարակության է պատրաստել հետևյալ գրքերը՝ «Բարձր Հայքի մանրանկարչություն ԺԱ-ԺԴ. դդ.» (համահեղինակ՝ Է. Կորխմազյան), «Պատճէն տումարի (Է-ԺԵ. դդ.)» (համահեղինակ՝ Ջուլիետ Էյնաթյան, նաև խմբագիր՝ Գ. Տեր-Վարդանյան)։

Մի քանի տասնյակի են հասնում ձեռագրագիտական, բնագրագիտական այն գրքերը, որոնք Գ. Տեր-Վարդանյանի խմբագրությամբ (հաճախ նաև առաջաբանով) են՝ Հրավարդ Հակոբյան, «Արցախ-Ուտիքի մանրանկարչությունը 13-14-րդ դդ.» (1989 թ.), Ալվիդա Միրզոյան, «Սկևռայի մասնատուփը (1293 թ. Կիկիկյան Հայաստան)» (1993 թ.), Թամար Ադամյան, «Հոգի և ժպիտ (մտորումներ, մանրագեպեր)» (1999 թ.), Ստելլա Վարդանյան, «Հայաստանի բժշկության պատմություն. Հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը» (2000 թ.), Լևոն Միրիջանյան, «Մեկ ազգ, մեկ ուղղագրություն» (2002 թ.), Ռուբեն Հակոբյան, «Սկզբից էր տառը. Գրի պատմության և տառարվեստի համառոտ ակնարկ, ՏՆՂԴ (4494)» (2004 թ.), «Մեկնութիւն խորանաց» (աշխ. Վ. Ղազարյան, 2004 թ.), «Յիշատակարան Սանահնոյ վանից (Սանահնի քէօթուկը)» (աշխ. Պ. Մուրադյան, 2007 թ.), «Ս. Բարսեղ Կեսարացի, Գիրք պահոց» (աշխ. Կ. Մուրադյան, 2008 թ.), «Մատենագիտություն «Էջմիածին» ամսագրի (1974-2008 թթ.)» (կազմեց տեր Արարատ ք. Պողոսյան, 2012 թ.), Ամիրդովլաթ Ամասիացի, «Ուսումն բժշկութեանն է այս» (աշխ. Դ. Կարապետյան, 2014), «Արարատ»-ի ժառանգութիւնը (հ. Ա, Բ., հրատ. պատր. Ս. Նահապետյան, 2017 թ.) և այլն։

Մատենադարանում աշխատանքային առաջին տարիներից մասնակցելով մատենադարանյան գրեթե բոլոր գիտաժողովներին, ինչպես նաև Մատենադարանից դուրս Հայաստանի և միջազգային տարբեր հաստատությունների կազմակերպած հայագիտական գիտաժողովների՝ Գևորգ Տեր-Վարդանյանը թողել է մի քանի տասնյակից ավելի տպագրված և անտիպ զեկուցումներ։ Նա հատկապես կարևորում էր գիտաժողովների դերը երիտասարդ գիտնականների համար, ամեն կերպ խրախուսում իր բաժնի աշխատակիցների մասնակցությունը, կարդում բոլորի զեկուցումները և արժեքավոր դիտողություններ անում։ Նաև առանձին ուշադրությամբ կազմում և խմբագրում էր գիտաժողովների նյութերի ժողովածուները, որոնցից են «Հայոց եկեղեցի և պետություն. Միջազգային գիտաժողովի նյութեր (մարտի 2-5, 2000 թ.)» (համախմբագիրներ՝ Է. Դանիելյան, Է. Բաղդասարյան), «Լևոն Խաչիկյան 90. Նյութեր Մատենադարանի հիմնադիր տնօրենի ծննդյան իննսունամյակին նվիրված միջազգային գիտաժողովի (9-11 հոկտեմբերի 2008 թ.)», «Ոսկանյան Աստվածաշունչի հրատարակության 350-ամյակը (1666-2016). «Հայերեն Սուրբ Գրքի թարգմանությունն ու հրատարակությունը պատմության հոլովույթում» միջազգային գիտաժողովի նյութեր (հոկտեմբեր 6-8, 2016 թ.)», «Լևոն Խաչիկյան, Հարյուրամյակ. Նյութեր ակադե-

միկոս Լևոն Խաչիկյանի ծննդյան հարյուրամյակին նվիրված հայագիտական միջազգային գիտաժողովի (28-30 հունիսի 2018 թ.)»:

Իր գիտական գործունեության առաջին տարիներից Գևորգ Տեր-Վարդանյանը հանդես է եկել ձեռագրական նյութերի գիտական արժևորմանը վերաբերող հոդվածներով և հրապարակումներով տարբեր ամսագրերում և թերթերում՝ «Հայրենիքի ձայն», «Երեկոյան Երևան», «Գրքերի աշխարհ», «Ազգ», «Հայաստանի Հանրապետություն», «Հայք» և այլն: Նա ըստ առիթի նշում էր, որ մեր մշակույթի հուշարձանները ժողովրդին մատչելի պետք է դարձնել, և դրա առաջին ճանապարհը ձեռագրերի մասին գիտահանրամատչելի նյութեր հրատարակելն է: Դրա լավագույն օրինակներից էր իր պատրաստած «Շուրիշկանի աւետարանը» գիրքը և իր խմբագրած «Զորավոր ավետարանը» (աշխ. Ա. Հարությունյան, Ա. Սիմոնյան):

Գևորգ Տեր-Վարդանյանը կազմել և հրատարակել է նաև անվանի գիտնականների գիտական ժառանգությունը ամփոփող ժողովածուներ (Մեսրոպ արքեպիսկոպոս Տեր-Մովսիսյան (Մեսրոպ Մագիստրոս), Օննիկ Եգանեան):

1990 թ. ի վեր հայաստանյան մամուլում («Հայաստանի Հանրապետություն», «Ավանգարդ», «Մաշտոց» և այլն) և Փարիզի «Յառաջ» օրաթերթում տպագրել է հայերենի դասական ուղղագրության վերականգնմանը և այդ ժամանակի լեզվաքաղաքականությանը վերաբերող գիտահրապարակախոսական մի շարք հոդվածներ:

Գևորգ Տեր-Վարդանյանը եղել է գիտական և խմբագրական մի շարք խորհուրդների անդամ՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հրատարակչական բաժնի հրատարակչական խորհրդի անդամ (2006 թ.-ից), «Մատենագիրք հայոց» մատենաշարի գիտական խորհրդի անդամ (2007 թ.-ից), Մատենադարանի գիտական խորհրդի անդամ (2008 թ.ից), «Բանբեր Մատենադարանի» հանդեսի խմբագրական խորհրդի անդամ (2014 թ.-ից), «Էջմիածին» ամսագրի խմբագրական խորհրդի անդամ (2014 թ.-ից):

Գևորգ Տեր-Վարդանյանի հարյուրավոր հոդվածների մաս են կազմում նաև արժեքավոր գրախոսությունները: Մեծ է նրա դերը ինչպես Հայաստանում, այնպես էլ աշխարհի տարբեր երկրներում հայերեն ձեռագրերի ցուցահանդեսների կազմակերպման և դրանց վերաբերյալ գիրք-ալբոմների պատրաստման գործում:

Գևորգ Տեր-Վարդանյանի տասնամյակների հայրենանվեր աշխատանքի բարձր գնահատականի վկայությունը ոչ միայն նրա աշխատությունների դրվատական գրախոսություններն են, այլ նաև նրա ստացած շքանշանները: 2008 թ. Ֆրանսիայի հանրապետության կառավարության կողմից Գևորգ Տեր-Վարդանյանը պարգևատրվել է «Գեղեցիկ արվեստների և գրականության» շքանշանով 2007 թ. Ֆրանսիայում Հայաստանի տարվա շրջանակներում Մատենադարանի

մասնակցությամբ կայացած ցուցահանդեսների կազմակերպման գործում ունեցած մեծ ավանդի համար, 2010 թ. Հայաստանի Հանրապետության նախագահի հրամանագրով պարգևատրվել է «Մովսես Խորենացի» մեդալով ՀՀ անկախության հռչակման 19-րդ տարեդարձի առթիվ, գիտության և կրթության բնագավառներում ներդրած նշանակալի ավանդի և բազմամյա վաստակի համար, 2016 թ. հայ մշակույթին մատուցած ծառայությունների, հայագիտության զարգացման գործում ունեցած մեծ ավանդի համար՝ Հայաստանի Ազգային գրադարանի «Հակոբ Մեղապարտ» հուշամեդալով, 2022 թ. իր գիտական գործունեության, մշակույթի ոլորտում ունեցած նշանակալի ավանդի և Մատենադարանում երկարամյա աշխատանքային գործունեության համար, թանգարանների միջազգային օրվա կապակցությամբ Գևորգ Տեր-Վարդանյանը պարգևատրվել է ՀՀ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության ոսկե մեդալով։

Տաթևիկ Մանուկյան
Բ.գ.թ.
Ձեռագրագիտության բաժնի ավագ գիտաշխատող